

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ**

**ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ X-XI ԴԴ. ՊՂՆՁԵ ԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2021**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

**Գիտական ղեկավար՝**

պ.գ.թ. **Ռ. Ե. Վարդանյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

պ.գ.դ. **Կ. Ա. Մաթևոսյան**

պ.գ.թ. **Ա. Լ. Զոհրաբյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

Խ. Արուսյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. մայիսի 20-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտ. թեկնածու

**Ա. Է. Հաչոյանյան**

## ԱՇԽԱՏԱԼՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԵՌՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Բյուզանդական դրամների հայաստանյան գտածոները՝ իրենց քանակով, տիպային բազմազանությամբ, հայտնաբերման հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների առկայությամբ գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի դրամական տնտեսության, դրամաշրջանառության, ինչպես նաև քաղաքական պատմության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առումով: Դրամների բազմաշերտ հետազոտությունը և դրա արդյունքների համադրումը գրավոր սկզբնաղբյուրների և հնագիտական տվյալների հետ հնարավորություն է ընձեռում նոր լույսի ներքո քննել Հայաստանի և ողջ տարածաշրջանի քաղաքական և տնտեսական պատմության որոշ դրվագներ:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է X-XI դարերում թողարկված բյուզանդական պղնձե դրամների պատկերագրական, ոճական, հնագրական, չափագիտական և հայտնաբերման հանգամանքներին վերաբերող տվյալների համալիր քննությամբ ճշգրտումներ կատարել ուսումնասիրվող դրամների դասակարգման, հարաբերական և բացարձակ ժամանակագրության մեջ, ինչպես նաև ներկայացնել բյուզանդական ֆոլիսների Հայաստան ներթափանցման ուղիներն ու շրջանառությունը:

Հետազոտության հիմնական ուղղություններից մեկը *անանուն* կոչված ֆոլիսների վերագրման, դասակարգման և ժամանակագրական հաջորդականության՝ մինչ օրս սպառիչ լուծում չստացած հարցերի քննությունն է: Խնդիրներ կան նաև դրամահատարանների տեղայնացման, դրամաթողարկման կազմակերպման և ֆոլիսների տնտեսական նշանակության ուսումնասիրման հարցերում: ՀՀ և պատմական Հայաստանի տարածքում պեղումներով և պատահականորեն հայտնաբերված դրամագիտական առատ նյութն ընձեռում է վերոնշյալ հարցերը նորովի քննելու հնարավորություն: Դրված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Հավաքել և համակարգել Հայաստանում հայտնաբերված՝ թեմային առնչվող դրամագիտական նյութը:
- Վերլուծել բյուզանդական պղնձե դրամների դերը, կիրառությունը և կարևորությունը կայսրության դրամական համակարգում: Այդ համատեքստում քննել անանուն ֆոլիսների ստեղծման նախադրյալները և հանգամանքները:
- Տիպաբանական և չափագիտական քննությամբ վերանայել 969-1092 թթ. թողարկված դրամների ժամանակագրական հաջորդականությունը:
- Կատարել համաժամանակյա ոսկե, արծաթե և պղնձե դրամների պատկերագրության համեմատական վերլուծություն:
- Իրականացնել ՀՀ տարածքում և դրանից դուրս հայտնաբերված նյութի համեմատական քննություն:

- Հայաստանի և տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում քննել բյուզանդական դրամների ներթափանցման ուղիները և կիրառման հիմնական ոլորտները:

- Հայաստանյան մեծաքանակ գտածոների տեղագրության և հայտնաբերման հանգամանքների վերաբերյալ տվյալների կիրառմամբ ներկայացնել X-XI դդ. թողարկված բյուզանդական պղնձե դրամների շրջանառությունը՝ ըստ փուլերի:

- Քննել բյուզանդական X-XI դդ. դրամների վերաշրջանառությունը Հայաստանում XII-XIII դդ. ընթացքում:

**Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը:**

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում ՀՀ տարածքից և Անիից հայտնի հազարավոր բյուզանդական դրամներ, որոնց վերաբերյալ ուսումնասիրությունը բացահայտում է դրանց կիրառման տեղական առանձնահատկությունները՝ կապված շրջանառության, տիպերի բազմազանության, գանձերի կազմի և այլ յուրահատկությունների հետ: Քննության առարկա դրամներն առաջին անգամ են համակարգվել, դասակարգվել և ներկայացվել՝ որպես Հայաստանի դրամական շրջանառության առանձին մաս:

Դրամների համալիր վերլուծության արդյունքները գործնական և մեթոդաբանական նշանակություն կարող են ունենալ ոչ միայն դրամագիտական, այլև ավելի լայն՝ պատմագիտական հետազոտությունների համար: Դրամների հայաստանյան շրջանառության քննությամբ բացահայտված տվյալները կարող են աղբյուրագիտական արժանահավատ հիմք ծառայել հնագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական, մշակութաբանական հետազոտությունների համար՝ հայագիտության և, ընդհանրապես, տարածաշրջանի միջնադարյան մշակութային ժառանգության ուսումնասիրության համատեքստում:

Տոլիսների առաջարկվող աղյուսակը՝ հստակեցված թվագրությամբ, կարող է ունենալ գործնական կիրառություն՝ հնագիտական պեղումներով բացված մշակութային շերտի առավել ճշգրիտ թվագրման համար:

**Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը:**

Առենախոսության մեջ արծարծվող խնդիրներն ուսումնասիրվել են, գլխավորապես, Հայաստանի պատմության թանգարանում (այսուհետ՝ ՀՊԹ) պահվող դրամների հիման վրա: ՀՊԹ հավաքածուն արժեքավորող առանձնահատկություններից է այն, որ դրամները, մեծ մասամբ, հայտնաբերվել են ներկայիս և պատմական Հայաստանի տարածքներում: Դրամագյուտերի ծագման տվյալների առկայությամբ է միայն հնարավոր իրականացնել դրամաշրջանառության խընդիրների քննությունը: Հայաստանյան գտածոներում քիչ չեն հնագիտական պեղումներով հայտնի դրամները, որոնք պարունակում են հայտնաբերման հանգամանքների և հնագիտական միջավայրի մասին ստույգ տվյալներ (Անի, Դվին, Գառնի, Ամբերդ, Արմավիր, Դավթի բլուր, Դաշտաղեմ, Երազգավորս, Գոգարան, Հայկաձոր, Եղեգիս, Արենի, Ծաղկաձոր, Սիսիան, Ջրվեժ, Կարմիր

սար, Լոռե ամրոց, նաև Հոփսիմեի, Արունի, Քասախի եկեղեցիների շրջակայք, Մաստարայի և Լոռի բերդի դամբարանադաշտեր): Բարեբախտաբար, հնարավորություն ենք ունեցել ուսումնասիրելու նաև Անի մայրաքաղաքի 1892-1893 և 1904-1917 թթ. պեղումներով հայտնաբերված դրամները, որոնք, իրենց քանակով և կազմով, հնարավորություն են տալիս զգալիորեն ընդլայնել և ամրոցացնել տարածաշրջանի դրամաշրջանառության խնդիրների հետազոտությունը:

ՀՊԹ-ի ժողովածուից բացի, քննվել են նաև Հայաստանի այլ թանգարաններում, Վրաստանի պետական թանգարանում, մասնավոր հավաքածուներում պահվող հազարավոր դրամները: Տեղական նյութը համադրվել է տարածաշրջանից դուրս հայտնաբերված բազմաթիվ դրամների հետ, որոնք ներկայացված են տարբեր հոդվածներում, պատկերագրքերում և մենագրություններում:

Անանուն ֆոլիաների տիպաբանական և ժամանակագրական հաջորդականության հետ կապված խնդիրների պարզաբանման համար մեծ կարեվորություն է ունեցել, հատկապես, գանձերի ուսումնասիրությունը: Հետազոտվել են Անիում, Ծաղկածորում, Բամբակաշատում, Վաղարշապատում, «Արագած վանքում», Աբովյանում, Դվինում, Ամբերդում, Երևանում, Հայկածորում հայտնաբերված գանձերը:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսության մեջ առկա խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է դրամագիտության մեջ կիրառվող վերլուծական մեթոդներով, այն է՝ դրամների կնիքների համեմատական քննություն, տիպաբանական դասակարգում, չափագիտական տվյալների վերլուծություն: Թողարկումների ժամանակագրական հաջորդականությունը պարզելու նպատակով մանրակրկիտ քննվել են վերահատված դրամները, այսինքն՝ այն դրամները, որոնք խփվել են ավելի վաղ հատված դրամների վրա: Ֆոլիաների պատկերագրական խնդիրների քննության համար դիտարկվել և համադրվել են 969-1092 թթ. իշխած կայսրերի թողարկած ոսկե և արծաթե դրամների, կնքադրոշմների, ինչպես նաև որմնանկարների, խճանկարների, մանրանկարների և կիրառական արվեստի պատկերակիր առարկաների տվյալները: Հայաստանյան գտածոների և հրատարակություններից հայտնի դրամների համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռել բացահայտելու այս դրամների տեղական առանձնահատկությունները: Աշխատանքում պատմահամեմատական մեթոդի միջոցով համադրվել են դրամագիտական հետազոտության արդյունքները հնագիտական, մատենագրական ու վիմագրական աղբյուրներից հայտնի տվյալների հետ, վեր են հանվել և քննվել Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական պատմության որոշ խնդիրներ:

Ատենախոսությունը շարադրված է դրամագիտական տվյալների, հնագիտական նյութի, այլ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների և տարա-

ընույթ գիտական ուսումնասիրությունների արդյունքների համալիր վերլուծությանը:

**Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները:** Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնում՝ արժանանալով դրական կարծիքի: Քննարկվող հիմնական դրույթները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակվել են վեց գիտական հոդվածներում և մեկ գրքում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

**Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որում ներառված են՝ հապավումների ցանկ, 11 աղյուսակ, լուսանկարների 18 աղյուսակ՝ բացատրագիր ցանկով:

## **ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի գիտական նորույթը, նպատակը, հետազոտության խնդիրները, մեթոդաբանությունը, ուսումնասիրվածության աստիճանը և գրականության համառոտ տեսությունը:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

969-1092 թթ. ԹՈՂԱՐԿՎԱԾ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՊՂՆՁԵ ԳՐԱՄՆԵՐԸ  
(ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԳՐՄԱՆ  
ԽՆԳԻՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

Ատենախոսության առաջին բաժնում ներկայացվել են բյուզանդական պղնձե դրամների թողարկման ընույթը, առանձնահատկությունները և ընթացքը: Առանձին բաժնում հետազոտվել են անանուն ֆոլիսների թողարկման նախադրյալները և սկզբնավորումը: Քննարկվել են անանուն ֆոլիսների վերաբերյալ ուսումնասիրություններում առկա տարբերությունները, դրանք համադրվել մեր վերլուծությունների արդյունքների հետ: Հայաստանում հայտնաբերված նյութի մանրակրկիտ հետազոտությամբ՝ անանուն ֆոլիսների դասերի ժամանակագրության, ինչպես նաև անանուն և կայսեր անունով ֆոլիսների փոխկապակցվածությանն առնչվող որոշ դրվագներում կատարվել են ճշգրտումներ և լրացումներ: Առանձին քննվել են առատորեն և երկարատև թողարկված A դասի ֆոլիսները, իրականացվել է տիպաբանական և ժամանակագրական դասակարգում:

Պղնձե դրամները, գրեթե միշտ, պահել են իրենց նշանակալի տեղը բյուզանդական դրամատնտեսական համակարգում: Դրամագիտության մեջ հենց պղնձե դրամների բարեփոխմամբ է սկսվում Բյուզանդական կայսրության դրամաթողարկումը: Բյուզանդիայի դրամական քաղաքականության ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ ոչ թանկարժեք մետաղից թողարկված ֆոլիաների միջոցով կայունացվել է դրամական համակարգը: Տնտեսության *մոնետրիզացիան* իրականացվել է, գլխավորապես, պղնձե դրամներով, որի մասին է վկայում դրանց թողարկման ծավալների աճը:

Սույն հետազոտության առարկա պղնձե դրամների թողարկման ժամանակագրական սահմանները հստակ են՝ Հովհաննես Չմշկիկի (969-976 թթ.) կառավարման շրջանից մինչև Ալեքսիոս I-ի (1081-1118 թթ.) դրամական բարեփոխումը՝ 1092 թ.: Բյուզանդիայի բավական կայուն և պահպանողական դրամական համակարգում այս ժամանակահատվածն առանձնանում է մի աննախադեպ նորամուծությամբ. հատվում են պղնձե դրամներ, որոնց վրա բացակայում են կայսեր պատկերն ու անունը: Տիպաբանորեն տարբեր ֆոլիաներից բաղկացած այդ շարքը ներկայումս հայտնի է «անանուն» եզրույթով:

Առանց կայսեր պատկերի ֆոլիաների ստեղծումը, մեր կարծիքով, կրկնում է բյուզանդական նախորդ դրամական բարեփոխումների սնդեղները, երբ պղնձե դրամների պատկերագրության, քաշի և որակի մեջ փոփոխություններ կատարելով՝ արհեստականորեն բարձրացվում էր դրանց գնային արժեքը: Անանուն ֆոլիաների պատկերագրական նախատիպի որոնման քննությամբ տեսնում ենք, որ էպիգրաֆիկ բնույթի ֆոլիաներ առաջին անգամ հանդես են եկել Թեոֆիլոս (829-842 թթ.) կայսեր օրոք թողարկված դրամների հորինվածքում: Շարունակելով մեր հետազոտությունը՝ նկատում ենք, որ պղնձե դրամներից առաջ այս պատկերագրությունը կիրառվել է արծաթե դրամներում, այն է՝ VIII դարի սկզբին ստեղծված արծաթե *միլիարեսիոններում*:

Անանուն ֆոլիաների ստեղծման նախադրյալներն առաջացել էին, երբ էականորեն ընդլայնվել էին Բյուզանդիայի սահմանները: Մեծացել էր պահանջարկը բյուզանդական դրամների նկատմամբ, որն ապահովելու համար պետք է միջոցներ ձեռնարկվեին: Բյուզանդիան ստիպված էր դրամական բարեփոխումներ կատարել: X դարի կեսին ստեղծվեց թեթև քաշով ոսկե տետարտերոնը, ապա նաև՝ անանուն ֆոլիսը: Սրանով կայսրությանը հաջողվեց որոշ ժամանակ ապահովել երկրի դրամական տնտեսության հավասարակշռությունը՝ Արևելքը ողողելով այդ թողարկումներով: Բյուզանդական դրամական համակարգում այս երկու դրամական միավորները հայտնվել են գրեթե միաժամանակ և դադարեցրել իրենց գոյությունը Ալեքսիոս I-ի դրամական բարեփոխմամբ:

Անանուն ֆոլիաների տասնմեկ դասերը թողարկվել են 969-1092 թթ. ընթացքում իշխած տասնչորս կայսրերի և երեք կայսրուհիների օրոք: Հայաստանյան նյութի հիման վրա հնարավորություն ենք ունեցել ճշգրտումներ

և լրացումներ կատարել արդեն գոյություն ունեցող մոտեցումներում, ինչպես նաև որոշ դասերի համար առաջարկելով նոր վերագրումներ՝ տալով դրանց հիմնավորումները:

Հակիրճ ամփոփմամբ՝ պատկերը հետևյալն է: A1 դասը թողարկվել է Հովհաննես Չմշկիկի (969-976 թթ.) օրոք: Նույն պատկերագրությամբ A2 դասը՝ Վասիլ II և Կոնստանտին VIII եղբայրների (976-1028 թթ.) օրոք, B դասը՝ Ռոմանոս III-ի (1028-1034 թթ.), C դասը՝ Միքայել IV-ի (1034-1041 թթ.), ներառելով մինչև 1042 թ. հունիս ժամանակահատվածը, երբ հաջորդաբար կարճատև իշխեցին՝ Զոեն, Միքայել V-ը, ապա համատեղ՝ Զոեն և Թեոդորան: D դասը թողարկվել է Կոնստանտին IX-ի (1042-1055 թթ.) օրոք, E-ն՝ Միքայել VI-ի (1056-1057 թթ.), F-ը՝ Իսահակ I-ի (1057-1059 թթ.), G-ն՝ 1068-1071 թթ., Ռոմանոս IV-ի օրոք: H և I դասերը թողարկվել են Նիկեֆորոս III-ի (1078-1081 թթ.), իսկ J և K դասերը՝ Ալեքսիոս I-ի (1081-1092 թթ.) օրոք:

Հայաստանից հայտնաբերված A2 դասի մեծաքանակ դրամների, մասնավորապես՝ զանձերի տվյալների հիման վրա, ոճապատկերագրական փոփոխությունների և կշռային տատանումների համակողմանի վերլուծության միջոցով առանձնացրել ենք չորս հաջորդական փուլ՝ A2.I, A2.II, A2.III և A2.IV: Այս փուլերում ներառել ենք պատկերագրական և չափագրական ամենամոտ կապերն ունեցող տարբերակները: Հետազոտության արդյունքում բացահայտվել են 5 նոր տարբերակներ՝ №26a, 24g, 45a, 45b, 1c, որոնք չկան բելիճերյան լրացված աղյուսակում:

#### **ՉԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**X-XI ԴԴ. ԹՈՂԱՐԿՎԱԾ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ  
ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Այս բաժնում քննվել են ֆոլիսների պատկերագրության ձևավորման վրա ազդած հնարավոր գործոնները: Համաժամանակյա ոսկե և արծաթե դրամների պատկերագրական օրինաչափությունների և առանձնահատկությունների վերլուծությունը, դրանց և պղնձե դրամների միջև եղած կապերի բացահայտումը հնարավորություն ընձեռեցին ճշգրտումներ անել խնդրահարույց դրամների վերագրումներում: Կայսերական դրամների վրա Հիսուս Քրիստոսին պատկերելու կանոնիկ սկզբունքների քննությունը մեծապես նպաստեց անանուն ֆոլիսներ թողարկած կայսրերի բացահայտման հարցում:

Նյութի համալիր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բյուզանդական դրամների պատկերագրությունը, իր բազմազանությամբ հանդերձ, որոշակիորեն կանոնակարգված է: Հովհաննես I-ից սկսած, երբ ներդրվեցին առաջին անանուն ֆոլիսները, ինչպես ոսկե և արծաթե, այնպես էլ պղնձե դրամների պատկերագրության և դրամական տիպերի հորինվածքային կառուցվածքում էական փոփոխություններ չկատարվեցին՝ հարազատ մնալով նրան նախորդած Նիկեֆորոս II-ի օրոք ձևավորված սկզբունքներին: Վասիլ II-ի դրամների



հորինվածքում պահպանվում է կապն իր նախնիների դրամական տիպերի հետ՝ ընդգծելով Մակեդոնյան հարստության ժառանգական հաջորդականությունը: Նրա օրոք թողարկված A2 դասի ֆոլիսները և մյուս դրամական միավորները, չնայած երկարամյա թողարկմանը, ունեն անփոփոխ, կայուն, միօրինակ պատկերագրություն: Ֆոլիսների B և C դասերը վերագրում ենք համապատասխանաբար Ռոմանոս III-ին և Միքայել IV-ին, որոնք երկուսն էլ ի ցույց են դրել, որ Մակեդոնյան հարստության ներկայացուցիչներ չեն, և, իրենց ոսկե, արծաթե ու պղնձե դրամական տիպերը ձևավորելիս, չեն օգտագործել նախորդների կողմից ստեղծված պատկերատիպերը: D դասի թողարկումը նախաձեռնած Կոնստանտին IX-ը առաջինն էր, որ, չլինելով Մակեդոնյան ընտանիքից, իր դրամներում կիրառել է նրանց օրոք ստեղծված պատկերագրությունները: Սա կարելի է կապել ոչ այնքան Կոնստանտինի կամքի, որքան նրա կնոջ՝ Մակեդոնյան տոհմի ժառանգորդ Զոե կայսրուհու հետ, որը, տվյալ շրջանում, ազդեցիկ դեր ուներ կայսրությունում: Բյուզանդական դրամների պատկերագրական զարգացումների և տասնյակ կայսրերի դրամաթողարկման սկզբունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս կարծել, որ D դասի թողարկումը շարունակվել է Թեոդորա կայսրուհու կարճատև իշխանության շրջանում (1055-1056 թթ.): Անանուն ֆոլիսների նոր՝ E դասի ներմուծումը տեղի է ունեցել Միքայել VI-ի օրոք, որի բոլոր դրամական տիպերում ընդգծվում է հաջորդականության խզումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսահակ I-ը, ինչպես իրեն նախորդած կայսր Միքայել VI-ը, փոփոխություններ է կատարել դրամական բոլոր միավորների պատկերագրության մեջ, պետք է ենթադրել, որ նա փոխեց նաև անանուն ֆոլիսների տիպը՝ ստեղծելով F դաս: Մեր ուսումնասիրության ուշագրավ արդյունքներից է այն արձանագրումը, որ Կոնստանտին X-ը, դադարեցնելով անանունների թողարկումը, հատել է տվել միայն իր անունով պղնձե դրամներ: Նրան վերագրվող E, F դասերի անանուն ֆոլիսների և իր պատկերով ֆոլիսների միջև պատկերագրական կապեր չկան: G դասի դրամների թողարկումը, որը վերագրում ենք Ռոմանոս IV-ին, իրականացվել է երկու փուլով: Վերաթողարկումների ուսումնասիրությամբ պարզվում է, որ դրանց մի մասը թողարկվել է Ռոմանոս IV-ի անունը կրող դրամների թողարկումից առաջ, մյուսը՝ հետո: Հիմքեր կան ենթադրելու, որ Եվդոկիա կայսրուհին անմիջական մասնակցություն է ունեցել անանուն ֆոլիսների G դասի պատկերագրության ստեղծմանը: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Ռոմանոս IV-ի անունը կրող պղնձե դրամները: Այդ ֆոլիսները, որոնց վրա չկա կայսեր պատկերը, հիշեցնում են անանուն ֆոլիսները, բայց դրանք անանուն չեն կարող կոչվել, քանի որ դրանց դարձերեսի չորս տառերը ներկայացնում են կայսեր անունը: Այդ դրամները պայմանականորեն անվանել ենք «կիսաանանուն» ֆոլիսներ: Միքայել VII-ը, ըստ երևույթին, իր հոր օրինակին հետևելով, դադարեցրել է անանուն ֆոլիսների թողարկումը և հատել միայն իր պատկերով և անունով ֆոլիսներ: Նրան հաջորդած կայսր Նիկեֆորոսը

թողարկել է և՛ անանուն, և՛ անունով ֆոլիաներ: Նրա դրամների պատկերագրական նմանությունն Իսահակ Կոմեննոսի և Ռոմանոս Դիոգենեսի դրամների հետ, որոնք իր նման ծագում էին զինվորական վերնախավից, հավանաբար, կանխամտածված ընտրություն է եղել: Մեկ այլ սկզբունքային կապ է բացահայտվում Ռոմանոս IV-ի և Նիկեֆորոս III-ի «անանուն» և «անունով» ֆոլիաների միջև. ինչպես որ G դասի անանուն ֆոլիաները թողարկվել են Ռոմանոսի անունը կրող ֆոլիաներից առաջ և հետո, այնպես էլ միանման հորինվածք ունեցող H և I դասերը, որոնք մենք վերագրում ենք Նիկեֆորոս III-ին, նախորդում (H դաս) և հաջորդում (I դաս) են նրա անունը կրող ֆոլիաներին: Անանուն ֆոլիաների թողարկումը դադարեցվեց Ալեքսիոս I-ի կողմից, նրա իշխանության 11-րդ տարում: Ալեքսիոսի դրամական տիպերն աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ. դրանց վրա ներկայացված են խաչի, Քրիստոսի և Աստվածամոր պատկերների գրեթե բոլոր հայտնի տիպերը: Նրա օրոք առատորեն թողարկվել են անանուն ֆոլիաների վերջին դասերը՝ J և K, որոնցից առաջինի պատկերագրությունը կապվում է իր նման զինվորական ծագում ունեցող կայսր Նիկեֆորոս III-ի դրամների, իսկ K դասը՝ մյուս զինվորական կայսր Ռոմանոս IV-ի օրոք թողարկված ֆոլիաների պատկերագրության հետ: Ալեքսիոսը, ինչպես վերը նշված զինվորական կայսրերը, թողարկել է նաև «կիսաանանուն» կոչված տիպի ֆոլիաներ, և պղնձե դրամների մեկ այլ տիպ, որի դիմերեսին կայսեր կիսանդրին է, դարձերեսին՝ կայսեր անվան սկզբնատառը: Այս տիպը կարելի է պայմանականորեն համարել «կիսաանանուն» ֆոլիաների «վերջնակետը», քանի որ դրանց դիմերեսին Քրիստոսի փոխարեն պատկերված է կայսրը:

Այսպիսով, «անանուն» տիպի ֆոլիաները, աստիճանաբար վերափոխվելով «կիսաանանուններ»-ի, 1092 թվականի դրամական բարեփոխմամբ վերջնականապես դուրս մղվեցին բյուզանդական դրամաթողարկումից:

#### **ՓԼՈՒՆ ԵՐՐՈՐԴ**

**ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ X-XI ԴԴ. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՖՈԼԻԱՆԵՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԹԱՓՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ  
XII ԴԱՐՈՒՄ ԵՎ XIII-Ի ՍԿԶԲԻՆ**

Ատենախոսության վերջին գլխում քննվում է X-XI դարերի բյուզանդական դրամների Հայաստան ներթափանցումը և երկարատև շրջանառությունը: Հայաստանում բյուզանդական դրամների լայն տարածվածության մասին են վկայում հնագիտական պեղումներով և պատահականորեն հայտնաբերված մեծաքանակ գտածոները:

Դրամագիտական ուսումնասիրությունը լայն հնարավորություններ է ընձեռում աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում տարածաշրջանում առաջացած տնտեսական բարդ իրավիճակը հասկանալու համար: Անանուն ֆոլիաների թողարկման և շրջանառության ժամանակահատվածը

համընկնում է հայ ժողովրդի պատմության թեժ և անկայուն շրջաններից մեկի հետ: Քննվող դրամների թողարկումն սկսվել է դեռևս Բագրատունյաց թագավորության ընթացքում՝ 969 թ., և շարունակվել սելջուկյան գերիշխանության շրջանում՝ մինչև 1092 թ., որից հետո, ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, այդ դրամները մնացել են շրջանառության մեջ:

Խնդրո առարկա ֆոլիաների հայտնաբերման տվյալների, մասնավորապես՝ պեղածո նյութի քննության վրա հիմնվելով՝ դրամների շրջանառությունը դիտարկել ենք երկու փուլով, որն ամփոփվել է առանձին բաժիններում.

ա. բյուզանդական դրամների ներթափանցումը Հայաստան՝ իրենց թողարկման շրջանում (X-XI դդ.),

բ. բյուզանդական դրամների վերաշրջանառությունը Հայաստանում՝ սելջուկյան իշխանությունների կողմից (XII-XIII դդ.), որը տևել է մինչև մոնղոլական արշավանքների սկիզբը:

Դրամների շրջանառության առաջին փուլի (969-1092 թթ.) ուսումնասիրությունը բարդ խնդիր է, քանի որ XII-XIII դդ. ընթացքում այդ դրամները շարունակել են շրջանառվել և, այդպիսով, հայտնվել են մշակութային այլ շերտում: Հետազոտության արդյունքներով արձանագրվում է, որ թեև ֆոլիաները տարածաշրջան ներթափանցել են իրենց թողարկման ժամանակահատվածում, սակայն դրանց միայն փոքր մասն է, որ թաքցված լինելու պատճառով՝ չի վերաշրջանառվել:

Քննելով դրամների ներթափանցման հավանական ուղիները և կիրառման հիմնական ոլորտները, պետք է արձանագրել, որ բյուզանդական դրամների ներհոսքը Հայաստան, նախ և առաջ, կապվում է Արևելյում կայսրության լայնածավալ նվաճողական գործողությունների հետ, որոնց արդյունքում Բյուզանդիայի տարածքը կրկնապատկվել էր: Պղնձե դրամները լայնորեն կիրառվում էին բանակային ծախսերի համար: Դրանց մեծաքանակ գտածոներն ուրվագծում են կայսերական զորքի երթուղին: Զինվորականների տրամադրության տակ եղած դրամի մեծ պաշարները նրանց արշավանքների ընթացքում հայտնվում էին նվաճված տարածքներում՝ տվյալ դեպքում Հայաստանում:

Մեր ետազոտությամբ հանգել ենք այն եզրակացության, որ X-XI դարերում թողարկված դրամները տարածվել են բյուզանդական նվաճումների, հայ-բյուզանդական շփումների, վարձկան զորքի, ռոճիկների, հարկերի, առևտրի միջոցով: Հարկ է նշել, որ այս շրջանում ապրանքային արտադրությունը և դրանով կատարվող առևտուրը դեռևս չէր ծավալվել այնքան, որքան XII-XIII դարերում:

Սելջուկյան տիրապետության շրջանում, մուսուլման կառավարիչներն իրենց տնտեսության մեջ կիրառում էին նաև քրիստոնեական պատկերագրությամբ դրամներ: Շարունակական հակամարտությունների, սեփական

դրամների անբավարարության, մետաղադրամի պահանջարկի աճի, նաև արծաթե դրամների սղության պատճառով սելջուկ կառավարիչների առջև ծառայել էր շուկան անհրաժեշտ քանակության դրամով լցնելու խնդիրը: Նման պայմաններում նրանք ստիպված էին շրջանառության մեջ թողնել տարածաշրջանում ընդունված և վստահություն վայելող, քրիստոնեական պատկերազրույթյամբ բյուզանդական պղնձե դրամները, որոնցով հեղեղված էր Արևելքի շուկան:

Այս շրջանում Արևելքը ընկղմվել էր նաև արծաթի սղությամբ պայմանավորված տնտեսական ճգնաժամի մեջ, որի հետևանքով պղնձե դրամների արժեքային ընկալումը փոփոխվել էր: Ստեղծված իրավիճակում հենց «անանուն» և «կայսերական» ֆոլիսները դարձան առևտրի կազմակերպման այն հարմար միջնորդները, որոնք մնացին շրջանառության մեջ ոչ միայն բյուզանդական գերիշխանության շրջանում, այլ նաև դրանից հետո:

XII դարում, երբ Սելջուկյան սուլթանությունը սկսել էր կազմալուծվել, սրվել էին ռազմաքաղաքական հակամարտությունները, մահմեդական իշխանությունները փորձում էին, քիչ ծախսեր կատարելով, կարգավորել դրամական տնտեսությունը: Սելջուկները բյուզանդական պղնձե դրամները վերածգտագործելով՝ դրանց մի մասի վրա դրոշմել են կարճ գրություններ պարունակող կնիքներով: Մակադրոշմակիր գտածոների տեղագրությունը հուշում է, որ այդ պրակտիկան լայնորեն կիրառվել է Մեծ Հայքի տարածքում գոյացած մահմեդական իշխանություններում: Մակադրոշմված դրամների քանակական հարաբերակցության պատկերը վկայում է այն մասին, որ սելջուկների տիրապետության շրջանում նախկին բյուզանդահպատակ տարածքները, ներառյալ տարածաշրջանի խոշորագույն քաղաքներից մեկը՝ Անին, շարունակում էին մնալ միասնական տնտեսական տարածք՝ սելջուկյան ռազմավարչական համակարգի ներսում: XII դարում և XIII-ի սկզբում հյուսիսարևելյան Հայաստանում շրջանառվել են ոչ միայն բյուզանդական, այլև ելտկուզյան (Շամս ադ-Դին, Կըզըլ Արսլան, Աբու Բաքր) և վրացական (Թամար, Ռուսուդան) պղնձե դրամներ, որի մասին են վկայում բազմաթիվ գտածոները:

Այսպիսով, XII դարում և XIII դարի սկզբին բյուզանդական ֆոլիսները շարունակել են մնալ շրջանառության մեջ մի տարածաշրջանում, որտեղ բնակչությունն առավելապես քրիստոնյա էր, այդ թվում՝ մեծաքանակ հայեր, իսկ կառավարիչները՝ մուսուլման: Բյուզանդական ֆոլիսների վերաշրջանառությունը, առաջին հերթին, դրամի պահանջարկով պայմանավորված տնտեսական միջոցառում էր, մյուս կողմից՝ սելջուկները դրանով ցանկանում էին տարածաշրջանում ներկայանալ որպես Բյուզանդիայի իրավահաջորդ՝ դրամահարկային և տարածքային կառավարման քաղաքականության մեջ:

Սելջուկյան պղնձե դրամների վրա կարելի է տեսնել ոչ միայն քրիստոնեական, այլև սելևկյան, սասանյան, հռոմեական դրամների պատկերազրույթունից ընդօրինակված մոտիվներ: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ խնդիրը միայն բնիկների նկատմամբ կրոնական հանդուր-

ժողովանդության ցուցադրումը չէր: Բյուզանդական, ինչպես նաև տարածաշրջանում դարեր առաջ իջնած այլ հզոր կայսրությունների թողարկած դրամների պատկերազրույթյան ընդօրինակմամբ թուրք-սելջուկյան վերնախավը նպատակ ուներ իր հպատակների շրջանում սերմանել տարածաշրջանում օրինական իրավահաջորդ լինելու մասին գաղափարը:

XII դարի երկրորդ կեսին և XIII դարերի առաջին քառորդում ներքին և արտաքին առևտուրը նախկինից ավելի մեծ ծավալ էր ծավալների էր հասել: Ապրանքային շուկայի ընդլայնմամբ խախտվել էր տնտեսական հաշվեկշիռն ապրանքաշրջանառության և դրամաշրջանառության միջև: Դրամները, XII դարում և մինչև XIII դարի 20-ականները թողարկվում էին, գերազանցապես, պղնձից՝ արծաթի ճգնաժամի խորացման պատճառով: Պղնձե դրամների նշանակությունը զգալիորեն աճել էր դրամական շրջանառության մեջ, և դրանք հանդես էին գալիս որպես արծաթե դրամների փոխարինողներ:

Դրամագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բյուզանդական պղնձե դրամների շրջանառության ամենակտիվ շրջանը, ըստ էության, եղել է սելջուկյան նվաճումներից մինչև մոնղոլական նվաճումների սկիզբն ընկած ժամանակահատվածը: Քրիստոնեական պատկերազրույթամբ այդ դրամները մեկ դարից ավելի վերաշրջանառվել են մակադդոնով և առանց դրանց, սելջուկյան և վրացական դրամների հետ միասին և, տնտեսական կիրառությունից դուրս գալուց հետո էլ, երկար ժամանակ օգտագործվել են քրիստոնյա բնակչության շրջանում՝ վերաձվելով զարդերի, որի մասին են վկայում հայաստանյան այդպիսի հարյուրավոր գտածոները:

## ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում հայտնաբերված դրամների, ինչպես նաև աղբյուրագիտական այլ նյութերի համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

- ՀՀ և պատմական Հայաստանի տարածքում պեղումներով և պատահականորեն հայտնաբերված բյուզանդական պղնձե մեծաքանակ դրամները, իրենց տիպային բազմազանությամբ, աղբյուրագիտական նշանակությամբ, հնարավորություն են տվել՝ համակողմանի քննությամբ լրաբանել պղնձե դրամների նշանակությունը բյուզանդական դրամաթողարկման մեջ, բացահայտել առանց կայսեր պատկերի դրամների պատկերազրույթյան նախատիպը և դրանց ծագման նախադրյալները, լրացումներ և ճշգրտումներ կատարել այդ դրամների վերագրման հարցում, համեմատական վերլուծության հիման վրա բացահայտել անանուն և կայսեր անունը կրող համաժամանակյա ոսկե, արծաթե և պղնձե դրամների միջև եղած կապերը և տարբերությունները, պարզաբանել X-XIII դարերում Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքի որոշ մանրամասներ՝ դրամների ուսումնասիրության համատեքստում:

- Պղնձե դրամները՝ ֆոլիաները, գրեթե միշտ, պահել են իրենց նշանակալի տեղը բյուզանդական դրամական տնտեսության համակարգում: X-XI դարերում, ֆոլիաների կշռի ավելացման ու որակի բարելավման միջոցով, բարձրացվեց պղնձե դրամի գնային արժեքը, դրանով իսկ ապահովելով երկրի դրամական տնտեսության հավասարակշռությունը: Վերաարժևորված ֆոլիաներն առատորեն շրջանառվել են նաև կայսրության սահմաններից դուրս, հատկապես՝ Արևելքում: XII-XIII դարերում, արծաթի ճգնաժամի պայմաններում, պղնձե դրամներն առավել կարևորություն ձեռք բերեցին և, հաճախ, հանդես էին գալիս որպես արծաթե դրամների փոխարինողներ:

- Քննվող շրջանում բացառիկ էր նոր բնույթի ֆոլիաների ստեղծումը, որոնց դիմերեսին կայսեր պատկերի և անվան փոխարեն ներկայացվեց Քրիստոսը, իսկ դարձերեսին՝ միայն Քրիստոսի անունը հիշատակող գրություն: Բյուզանդական դրամական պատկերագրության մեջ, դիմերեսին՝ դիմապատկեր, դարձերեսին՝ գրություն, հորինվածքն արդեն իսկ գոյություն ուներ, նորույթը կայսրին դրամների վրա չհիշատակելն էր: Դրամական այս բարեփոխումը, առաջին հերթին, պղնձե դրամների գնային արժեքը բարձրացնելու և շրջանառությունն ընդլայնելու միտում ուներ:

- Հայաստանյան գտածոների մանրակրկիտ տիպաբանական ուսումնասիրությամբ՝ հիմնված պատկերագրական, ոճական, հնագրական, չափագիտական քննության և դրանց համեմատական վերլուծության վրա, բացահայտվեցին անանուն և կայսեր անունը կրող համաժամանակյա ոսկե, արծաթե և պղնձե դրամների միջև եղած կապերը և տարբերությունները:

- Հայաստանյան (ներառյալ Անիի) առատ նյութի ուսումնասիրությամբ հաջողվեց ուղղումներ կատարել անանուն ֆոլիաների 11 դասերի՝ 969-1092 թթ. իշխած 14 կայսրերից և 3 կայսրուհիներից յուրաքանչյուրի թողարկումների վերագրման մեջ, ինչպես նաև որոշ տիպերի համար առաջարկել միանգամայն նոր վերագրումներ:

- Հայաստանից հայտնաբերված դրամների, մասնավորապես՝ գանձերի հիման վրա կատարվել է երկարատև թողարկված (976-1028 թթ.) A2 դասի ֆոլիաների փուլային դասակարգում: Այս ֆոլիաների ոճապատկերագրական զարգացումների և կշռային տատանումների համակողմանի վերլուծությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ դասում կարելի է տարբերակել 4 փուլ՝ A2.I, A2.II, A2.III և A2.IV: Այդ փուլերում ներառել ենք պատկերագրական և չափագրական ամենամոտ կապերն ունեցող տարբերակները: Մեր հետազոտության արդյունքում բացահայտվեցին 5 նոր տարբերակներ, որոնք չկան քելինջերյան լրացված աղյուսակում:

- 969-1092 թթ. ընթացքում իշխած կայսրերի / կայսրուհիների դրամաթողարկումներում դրսևորված որոշ առանձնահատկությունների և պատկերագրական սկզբունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է տվել բացահայտելու պատկերագրական տիպերի ընտրության շարժառիթները: Դրանց մի մասում արտացոլում են գտել դինաստիական կապերը

(Կոնստանտին VII - Վասիլ II - Կոնստանտին VIII - Թեոդորա, Կոնստանտին X - Եվդոկիա - Միքայել VII, Իսահակ I - Ալեքսիոս I), մյուսներում՝ զինվորական (Իսահակ I, Ռոմանոս IV, Նիկեֆորոս III, Ալեքսիոս I) և, նույնիսկ, գեներալային պատկանելությունը (Զոե, Թեոդորա, Եվդոկիա):

• Ճշգրտելով բյուզանդական ֆոլիսների թվագրության հարցերը, դրանք դիտարկել ենք Հայաստանի և տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների, սոցիալ-տնտեսական հարաբերությունների համատեքստում: Քննվող ֆոլիսները, թողարկված լինելով X դարի վերջին երրորդում և XI դարում, վերաշրջանառվել են նաև XII-XIII դդ., երբ տարածաշրջանում հաստատվել էր թուրք-սելջուկյան գերիշխանությունը: Դրա մասին են վկայում գանձերում և հնագիտական շերտերում բյուզանդական ֆոլիսների հայտնաբերումները վրացական և սելջուկյան դրամների հետ միասին, ինչպես նաև ֆոլիսների վրա արաբատառ մակադրոշմների առկայությունը:

• Բյուզանդական դրամների շրջանառության քննությամբ բացահայտվեցին դրանց՝ Հայաստան ներթափանցման հավանական ուղիները և կիրառման հիմնական ոլորտները X-XI դարերում: Բյուզանդական դրամների հոսքը Հայաստան, նախ և առաջ, պայմանավորված էր Արևելքում կայսրության լայնածավալ նվաճողական գործողություններով, որոնց արդյունքում կրկնապատկվել էր Բյուզանդիայի տարածքը: Բանակային ծախսերի համար նախատեսված և զինվորականների տրամադրության տակ եղած դրամի մեծ պաշարները նրանց արշավանքների ընթացքում հայտնվում էին նվաճված տարածքներում՝ տվյալ դեպքում Հայաստանում: Պղնձե դրամների գտածոները, մեծ մասամբ, դրա վկայությունն են:

• Բյուզանդական դրամների Հայաստան ներթափանցման ու տարածման գործում որոշակի դեր են ունեցել հայ-բյուզանդական բազմաբնույթ հարաբերություններն ու շփումները՝ ինչպիսիք են վարձկան զորքին և տեղական պաշտոնյաներին տրվող ռոճիկները, հարկային վճարումները և առևտրային կապերը: Այնուամենայնիվ, այդ շրջանում ապրանքային արտադրությունը և դրամով կատարվող առևտուրը դեռևս չէր հասել այն մակարդակին, ինչպիսին, տարբեր աղբյուրների, այդ թվում՝ դրամական գտածոների տվյալներով արձանագրվում է XII-XIII դարերում:

• Դրամագիտական նյութի քննությամբ պարզվեց, որ Հայաստանում բյուզանդական պղնձե դրամների շրջանառության ամենակտիվ շրջանը, ըստ էության, եղել է սելջուկյան նվաճումներից մինչև մոնղոլական նվաճումների սկիզբն ընկած ժամանակահատվածը: Այն դեպքում, երբ VI-VII և X-XI դարերի ֆոլիսները Դվինում հայտնաբերվում են համեմատաբար սակավ և վերաբերում են իրենց թողարկման ժամանակաշրջանի մշակութային շերտին, Անիում դրանք առատորեն ի հայտ են գալիս մակադրոշմներով կամ վրացական և սելջուկյան դրամների հետ նույն հնագիտական միջավայրում՝ վկայելով դրանց վերաշրջանառության մասին XII-XIII դդ.: Դրամական գտածոների աշխարհագրությունը լրացուցիչ փաստարկներ է ընձեռում հաստատելու, որ Հայաստանի՝

վարչաքաղաքական գործոններով տարանջատված երկու հատվածները, նրանց միջև եղած որոշակի կապերով հանդերձ, գտնվել են դրամաշրջանառության տարբեր ոլորտներում: Միջնադարյան երկու խոշոր քաղաքներում՝ Դվինում և Անիում, հայտնաբերվել են նույն խմբի դրամներ, սակայն Դվինում գերակշռում են ելտկուզյան դրամները (մոտավորապես 24 անգամ ավելի, քան Անիում), իսկ Անիում՝ բյուզանդականը (29 անգամ ավելի, քան Դվինում):

- XI-XII դդ. արծաթե դրամների տղության պատճառով, սելջուկ կառավարիչները, շուկան անիրաժեշտ քանակության դրամով ապահովելու համար, իրենց թողարկած դրամների հետ միասին շրջանառության մեջ թողեցին քրիստոնեական պատկերագրությամբ բյուզանդական դրամները: Դրանք տարածաշրջանում ընդունված և վստահություն վայելող արժույթ էին թե՛ մուսուլմանների, և թե՛ սելջուկների իշխանության տակ գտնվող քրիստոնյաների համար: Տոլիսների վրա կայսեր պատկերի բացակայությունը, ինչ-որ առումով, «ապաքաղաքականացնում» էր առօրյա կյանքում հաճախ կիրառվող դրամի այդ տեսակը և դյուրին դարձնում դրա ազատ շրջանառությունը բազմազգ և բազմակրոն բնակչությամբ տարածաշրջանում: Քրիստոսի պատկերով դրամների կիրառությամբ սելջուկ կառավարիչները միաժամանակ վավերացնում էին իրենց քաղաքական օրինականությունը նվաճած տարածքներում՝ ներկայանալով որպես «Բյուզանդիայի իրավահաջորդ»՝ դրամահարկային և տարածքային կառավարման քաղաքականության մեջ:

- Տնտեսական գործառույթը կորցնելուց հետո, ֆոլիսները, իրենց պատկերագրության շնորհիվ, քրիստոնյա բնակչության շրջանում երկար ժամանակ օգտագործվեցին իբրև զարդ և հնայիլ, որի մասին են վկայում հայաստանյան այդպիսի հարյուրավոր գտածոները:

- Բյուզանդական դրամների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց անդրադառնալ տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացումներում Հայաստանի և հայ ժողովրդի դերակատարմանը՝ X դ. երկրորդ կեսից մինչև XIII դ. առաջին կեսը՝ աշխարհաքաղաքական վայրիվերումներով հարուստ ժամանակահատվածում:

**ԱՏԵՆԱՏՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅՑՆԵՐՆ ԱՐՏԱՑՈՒՎԱԾ ԵՆ  
ՇԵՂԵՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. Ծաղկաձորի «Խաչեր» հնավայրի և դամբանադաշտի 2007-2008 թթ. պեղումները, «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 91-101 (համահեղինակներ՝ Մելքոնյան Հ., Կարապետյան Ի., Միրիջանյան Դ.):

2. Բյուզանդական անանուն ֆոլիսների գանձ՝ Ծաղկաձորի Խաչեր հնավայրի պեղումներից, ԲԵՀ. Հայագիտություն, 2013, 141.1, էջ 16-29:



3. 969-1092 թթ. թողարկված բյուզանդական ֆոլիսները և դրանց շրջանառությունը Հայաստանում, «Վէմ» համահայկական հանդես, 2014, թ. 2 (46), էջ 114-130:

4. Հիսուս Քրիստոսի պատկերը բյուզանդական դրամներում, «Էջմիածին», 2014, Ե, էջ 62-77:

5. Sylloge Nummorum Byzantinorum, Անանուն ֆոլիսներ, A դասի, ՀՊԹ, հ. III, խմբ. Ռ. Վարդանյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 284 էջ:

6. Անիի դրամները, Պատմամշակութային ժառանգության մատենաշար, «Հուշարձան» տարեգիրք, 2017-2018, հ. ԺԲ-ԺԳ, էջ 190-201:

7. Բյուզանդական դրամները Հայաստանում, Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը, խմբ. Ռ. Վարդանյան, Երևան, ՀՀ կենտրոնական բանկի հրատ., 2018, էջ 80-105:

Оганнисян Асмик Самвеловна

## **ВИЗАНТИЙСКИЕ МЕДНЫЕ МОНЕТЫ X-XI ВЕКОВ И ИХ ОБРАЩЕНИЕ В АРМЕНИИ**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук  
по специальности 07.00.03 «Археология»

Защита состоится 20 мая 2021 г. в 14:00 ч., на заседании специализированного  
совета 007 по археологии и этнографии ВАК РА, действующего при  
Институте археологии и этнографии НАН РА  
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15).

### **РЕЗЮМЕ**

В настоящей работе в научный оборот вводится богатый нумизматический материал, состоящий из нескольких тысяч византийских монет, найденных на территории Республики Армения и средневекового города Ани. Материал исследован, систематизирован, классифицирован и впервые представлен в системе денежного обращения Армении.

Благодаря количеству, разнообразию типов и сведениям об обстоятельствах обнаружения, византийские монеты с территории Армении представляют большой научный интерес не только в плане истории экономики и денежного обращения, но и в плане социально-политических отношений страны в указанный период.

Сопоставление результатов, полученных в ходе исследования монет с данными письменных и археологических источников, дает возможность рассмотреть в новом свете некоторые эпизоды политико-экономической истории Армении и всего региона.

Целью работы является исследование проблем классификации, относительной и абсолютной хронологии медных византийских медных

монет X-XI вв., а также путей проникновения, сфер и обстоятельств их обращения в Армении.

В рамках настоящей темы рассмотрены следующие вопросы: а) значение медных монет в византийской денежной системе, б) иконографические прототипы и предпосылки возникновения *анонимных фоллисов*, в) проблемы атрибуции анонимных фоллисов X-XI веков, г) иконографические сходства и различия между золотыми, серебряными и медными монетами, д) причины и пути проникновения и обращения фоллисов в Армении в рассматриваемое время, е) обращение византийских фоллисов X-XI веков в период их выпуска и после, в период господства сельджуков до первой трети XIII века, ж) некоторые аспекты политической и экономической жизни Армении X-XIII вв. в контексте данных указанного нумизматического материала.

На основе образцов из монетных кладов, найденных в Армении, проведен детальный анализ стилистических, иконографических и метрологических особенностей наиболее продолжительного выпуска анонимных фоллисов класса A2 (976-1028 гг.). В нем нами выделено 4 этапа: A2.I, A2.II, A2.III и A2.IV. Выявлено также пять новых вариантов этого класса, которые отсутствуют в дополненной таблице *Беллинджера*.

Наши исследования показали, что Константин X, прекратив выпуск анонимных медных монет, выпускал исключительно фоллисы со своим именем. По всей вероятности, Михаил VII, по примеру своего отца, прекратил выпуск анонимных фоллисов и чеканил только фоллисы со своим изображением и именем.

В целом же, мы предлагаем следующую атрибуцию и хронологическую шкалу анонимных фоллисов: класс A1 был выпущен во время правления Иоанна Цимисхия (969-976); класс A2 – в период Василия II и Константина VIII (976-1028); класс B – Романом III (1028-1034); класс C – при Михаиле IV (1034-1041) до июня 1042 г. включительно, когда поочередно правили Зоя, Михаил V, а затем Зоя и Феодора совместно; класс D был выпущен при Константине IX (1042-1055); класс E – при Михаиле VI (1056-1057); класс F – в правление Исаака I (1057-1059); класс G – при Романе IV (1068-1071); классы H и I – при Никифоре III (1078-1081), а классы J и K – при Алексее I (1081-1092).

Приток византийских монет в Армению был обусловлен прежде всего масштабными завоеваниями империи на Востоке. Большие массы монет появлялись на завоеванных территориях как денежные резервы войска, предназначенные для покрытия военных нужд. В проникновении и распространении византийских монет в Армении сыграли определенную роль и другие обстоятельства в армяно-византийских отношениях и контактах, такие как торговые связи, жалование, выплачиваемое имперскими властями наемникам и местным чиновникам, налоговые платежи и др. Однако, в указанный период денежное обращение в сфере

торговли все еще не достигло уровня XII-XIII веков, зафиксированного в разных источниках, в том числе и в монетных находках. Изучение нумизматического материала показывает, что наиболее активное обращение византийских медных монет X-XI веков в Армении приходится на период правления сельджуков.

В условиях «кризиса серебра», сельджукские правители, с целью пополнения рынка необходимым количеством монет, были вынуждены разрешить обращение византийских фоллисов, пользующихся доверием как среди христиан, так и среди мусульман региона. Отсутствие изображения и имени императора на этих монетах в некотором роде «деполитизировало» и облегчало их свободное хождение в регионе с многонациональным и многоконфессиональным населением.

Изучение византийских монет дало возможность поразмыслить о роли Армении и армянского народа в политическом, экономическом и культурном развитии региона, со второй половины X в. до первой половины XIII в. - в период, богатый геополитическими потрясениями.

Hasmik Samvel Hovhannisyan

## **BYZANTINE COPPER COINS OF THE 10<sup>TH</sup>-11<sup>TH</sup> CENTURIES AND THEIR CIRCULATION IN ARMENIA**

Dissertation for the degree of Doctor of History  
on the specialization of “Archaeology” 07.00.03

The defense of the dissertation will be held on May 20, 2021, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of SQC RA by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents str.)

### **SUMMARY**

In this work, an abundant numismatic material is introduced into scientific circulation, consisting of several thousand Byzantine coins found in the territory of the Republic of Armenia and the medieval city of Ani. The material has been examined, classified and presented for the first time in the system of monetary circulation in Armenia.

In their quantity, variety of types and information on the circumstances of their finds, Byzantine coins from the territory of Armenia are of great scientific interest not only in terms of history of economics and monetary circulation, but also in terms of the socio-political relations of Armenia during the specified period.

The comparison of the results obtained during the comprehensive study of coins with the data of written and archaeological sources makes it possible to

consider some episodes of the political and economic history of Armenia and the entire region from a new perspective.

The dissertation aims to study the problems of classification, relative and absolute chronology of Byzantine copper coins of 10th-11th centuries, as well as the ways of appearance and circumstances of their circulation in Armenia.

Within the framework of this topic, the following issues are addressed: a) the importance of copper coins in the Byzantine monetary system, b) iconographic prototypes and prerequisites for the occurrence of anonymous folles, c) problems of attribution of anonymous folles struck between last three decades of 10th century through the end of 11th century, d) iconographic similarities and differences between gold, silver and copper coins, e) the reasons and ways of penetration and circulation of the folles in Armenia at the time in question, f) the circulation of the Byzantine folles of the 10th-11th centuries during their release and after, during the period of Seljuk domination until the first third of the 13th century, g) some aspects of political and economic life in Armenia in 10th-13th centuries within the context of the data of the subject matter numismatic material.

On the basis of samples from coin hoards found in Armenia, a detailed analysis of stylistic, iconographic, technical and metrological features of the longest issue of anonymous folles class A2 (976-1028) was carried out. We have identified four phases in it: A2.I, A2.II, A2.III and A2.IV. Five new varieties of this class have been identified, which are absent in the amended table of Bellinger.

Our research shows that Constantine X, having stopped issuing anonymous copper coins, issued only folles with his own name. Analyzing the coin types of Michael VII, we consider it possible that he, following the example of his father, stopped issuing anonymous folles and minted only folles with his own image and name.

In general, we propose the following attribution and chronological scale of anonymous folles: class A1 was issued during the reign of John Zimisces (969-976); class A2 - under Basil II and Constantine VIII (976-1028); class B - under Romanus III (1028-1034); class C - under Michael IV (1034-1041), including a period up to June, 1042, when Zoe, Michael V, and then Zoe and Theodora ruled in succession; class D was issued under Constantine IX (1042-1055); class E - under Michael VI (1056-1057); class F - during the reign of Isaac I (1057-1059); class G - under Romanus IV (1068-1071); classes H and I - under Nicephorus III (1078-1081), and classes J and K - under Alexius I (1081-1092).

The influx of Byzantine coins to Armenia was primarily due to the large-scale conquests of the Empire in the East. Large amounts of coins appeared in the conquered territories as the monetary reserves of the troops, intended to cover military needs. Other circumstances in the Armenian-Byzantine contacts, such as trade relations, salaries paid by the imperial authorities to mercenaries and local officials, tax payments, etc., also played a role in the occurrence and distribution

of Byzantine coins in Armenia. However, during this period, money circulation in the field of trade still did not reach the level of the 12th-13th centuries, recorded in various sources, including coin finds. The study of numismatic material shows that the most active circulation of the 10th-11th -centuries Byzantine copper coins in Armenia falls on the period of the Seljuk rule.

In the context of the “silver crisis”, the Seljuk rulers, in order to replenish the market with the required amount of coins, were forced to allow the circulation of Byzantine folles, which were accepted and trusted by both Christians and Muslims of the region. The absence of the emperor's image and name on anonymous coins in some way “depoliticized” and facilitated their free circulation in a region with a multi-ethnic and multi-religious population.

The study of Byzantine coins provided an opportunity of touching upon the role of Armenia and the Armenian people in the political, economic and cultural developments of the region from the second half of the 10th century to the first half of the 13th century, during a period rich in geopolitical upheavals.

A handwritten signature in black ink, appearing to read "Z. Amirkhanyan". The signature is stylized and cursive, with a large initial "Z" and a long, sweeping underline.